10 ՀԱՐՑ ՐՈՊԵ

ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԹԵ Ո՞Վ ԵՆՔ ՄԵՆՔ, ԻԲՐԵՎ ԱԶԳ

Մարդահամարը. ուրվագիծ

- **Ի՞նչ.** Մարդահամարը Միացյալ Նահանգներում բնակվող բոլոր անձանց հաշվարկն է:
- **Ո՞վ.** Հաշվարկը ներառում է ԱՄՆ բոլոր բնակիչներին՝ քաղաքացի թե ոչ քաղաքացի:
- **Ե՞րբ.** Ձեր թերթիկը կստանաք 2010 թ. մարտին՝ ԱՄՆ փոստով, կամ առձեռն: Հեռավոր վայրերում որոշ անձանց հաշվարկումը կկատարվի առերես:
- **Ինչու՞.** ԱՄՆ Սահմանադրությունը պահանջում է, որ յուրաքանչյուր 10 տարին մեկ կատարվի ազգային մարդահամար՝ որոշելու բնակչության թիվն ու սահմանելու ԱՄՆ Ներկայացուցիչների պալատում յուրաքանչյուր նահանգին հատկացվող տեղերի քանակը:
- **Ինչպե՞ս.** Թերթիկը ստանալուն պես ընտանիքները պետք է լրացնեն այն ու ետ ուղարկեն փոստով: Ընտանիքները, որոնցից պատասխան չի ստացվել, կարող են ապրիլի սկզբին եւս մեկ թերթիկ ստանալ: Ընտանիքները, որոնք իրենց թերթիկը չեն վերադարձնի, այցելություն կստանան մարդահամարն անցկացնողներից՝ հաշվարկն առերես կատարելու նպատակով:

Լիարժեք հաշվարկ. մարդահամարի տվյալների կարևորությունը

- Ամեն տարի դաշնային կառավարությունն ավելի քան $400 միլիարդ է հատկացնում նահանգներին ու համայնքներին՝ ելնելով, մասամբ, մարդահամարի տվյալներից:
- Մարդահամարի տվյալներն օգտագործվում են՝ սահմանելու մանրածախ առեւտրի կետերի, դպրոցների, հիվանդանոցների, նոր բնակարանային համալիրների և համայնքային այլ ձիրք երի տեղակայման վայրերը:
- Մարդահամարի տվյալների հիման վրա են սահմանվում նահանգային և տեղական օրենսդիր, ինչպես նաեւ կոնգրեսական ընտրատարածքների սահմանները:

2010 թ. մարդահամարի թերթիկը. 2010թ. մարդահամարի թերթիկը հեշտ է լրացնել, կարևոր է և ապահով

- 2010 թ. մարդահամարի թերթիկը, որը միայն 10 հարցից է կազմված, կարելի է լրացնել մոտ 10 րոպեում: Ընտանիքներին խնդրվում է հիմնական բնույթի ժողովրդագրական տեղեկատվություն ներկայացնել, ներառյալ՝ վարձովի՞ է, արդյոք, բնակտարածքը, թե՞ սեփական, բնակության հասցեն, ընտանիքում ապրող այլ անձանց անունները, սեռը, տարիքն ու ռասայական պատկանելությունը:
- Ըստ օրենքի, Մարդահամարի գրասենյակը չի կարող մեկ անձի պատասխանները բացահայտել մեկ այլ անձի, ներառյալ, այլ դաշնային գործակալությունների և իրավապահ մարմինների:

United States Census 2010

ԱՄՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ-2010

ԱՅՆ ՄԵՐ ՁԵՌՔՈՒՄ Է

ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին մարդահամարն կատարվել է 1790 թվականին՝ ԱՄՆ Ներկայացուցիչների պալատում յուրաքանչյուր նահանգին հատկացվելիք տեղերի քանակը որոշելու նպատակով: Մարդահամարը ստեղծվել էր նաեւ՝ ավելի լավ պատկերացում կազմելու համար, թե որտեղ են մարդիկ բնակվում, եւ ազգաբնակչության աճին զուգընթաց, ապահովելու բնակեցման հետեւողականությունը:

ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՄԱՍԻՆ

Մարդահամարի գրասենյակը հիմվել է 1902 թվականին: Այսօր, բնակչության և բնակարանավորման հաշվարկն իրականացնելուց զատ, Մարդահամարի գրասենյակն անցկացնում է նաեւ ավելի քան 200 տարեկան հարցում, ներառյալ Ամերիկյան համայնքային հարցումը, Ընթացիկ բնակչության հարցումը, և տնտեսական մարդահամարը՝ յուրաքանչյուր հինգ տարին մեկ:

Մենք չենք կարող առաջ անցնել մինչև սա չվերադարձնեք:

2010 թ. մարդահամարի գլխավոր ամսաթվերը

2010 թ. փետրվար – մարտ

Մարդահամարի թերթիկները փոստով առաքվում կամ հանձնվում են ընտանիքներին:

2010 թ. մարտ – ապրիլ

Իրականացվում է “Մասնակցեք մարդահամարին” ծրագիրը: Այն անձինք, ովքեր մարդահամարի թերթիկ փոստով չեն ստացել, կարող են այն ձեռք բերել առանձին հանրային կետերում:

Ապրիլի 1, 2010

ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՕՐ

2010 թ. մայիս – հուլիս

Մարդահամար անցկացնողներն այցելում են այն ընտանիքներին, որոնք թերթիկը փոստով չեն վերադարձրել:

Դեկտեմբերի 31, 2010

Ըստ օրենքի, Մարդահամարի գրասենյակը բնակչության հաշվարկը ներկայացնում է նախագահին:

2011 թ. մարտ

Ըստ օրենքի, Մարդահամարի գրասենյակն ավարտում է նախագահին ընտրական տեղամասերի վերաձևավորման մասին տվյալների հանձնումը:

Հաճախակի տրվող հարցեր

1. Հ. Ո՞վ պետք է լրացնի մարդահամարի թերթիկը:

Պ. Այն անձը, որի անունը նշված է իբրեւ բնակտարածքի սեփականատեր կամ վարձակալ, պետք է լրացնի թերթիկը բնակտարածքում ապրող յուրաքանչյուր անձի անունից, ներառյալ բարեկամներն ու ոչ-բարեկամները:

2. Հ. 2010 թ. մարդահամարն ինչո՞վ է տարբերվում նախորդ մարդահամարներից:

Պ. 2010 թվականին յուրաքանչյուր տուն կստանա միայն 10 հարցից բաղկացած կարճ թերթիկ: Տասնամյա մարդահամարների միջոցով անցյալում հավաքվող ավելի մանրամասն հասարակական-տնտեսական բնույթի տեղեկություններն այժմ հավաքվելու են բնակչության սոսկ մի փոքր տոկոսից, Ամերիկյան համայնքային տարեկան հարցման միջոցով: Ամերիկյան համայնքային հարցման մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք www.census.gov:

3. Հ. Մարդահամարի տվյալներն ինչպե՞ս են օգտագործվում:

Պ. Մարդահամարի տվյալների հիման վրա որոշվում է ԱՄՆ Ներկայացուցիչների պալատում յուրաքանչյուր նահանգի ձայների թիվը: Մարդահամարի տվյալները կարող են նաեւ օգնել որոշելու դաշնային հատկացումների չափը համայնքային ծառայություններին, օրինակ՝ դպրոցական ճաշի ծրագրերին ու տարեց քաղաքացիների կենտրոններին, ինչպես նաև նոր կառույցներին, ինչպիսիք են մայրուղիներն ու հիվանդանոցները:

4. Հ. Ինչպիսի՞ օգնություն կարելի է ստանալ թերթիկը լրացնելու համար:

Պ. 2010 թ. մարդահամարի թերթիկը լրացնելու նպատակով լեզվական օգնության ձեռնարկը կարելի է ձեռք բերել մի շարք լեզուներով: Նրանք, ովքեր թերթիկը կարդալու կամ հասկանալու դժվարություն ունեն, կարող են դիմել Հարցաշարի օգնության կենտրոններին (QAC): Տեսողության դժվարություն ունեցողները ցպահանջ կարող են ստանալ մեծ տառերով տպագրված թերթիկներ, իսկ լսողության դժվարություն ունեցողները կարող են օգտվել Խուլերի համար նախատեսված հեռատեքստային սարքի (TDD) ծրագրից: Մատչելի օգնության տեսակների և QAC կետերի մասին լրացուցիչ մանրամասների համար կապվեք Մարդահամարի՝ Ձեր շրջանային կենտրոնի հետ:

5. Հ. Ինչպե՞ս է Մարդահամարի գրասենյակը հաշվում մշտական բնակության վայր չունեցող անձանց քանակը:

Պ. Մարդահամարի գրասենյակի աշխատակիցները ծավալուն գործունեություն են իրականացնում անձամբ հաշվելու խմբային բնակտարածքներում, օրինակ՝ համալսարանական հանրակացարաններում, զորանոցներում, ծերանոցներում ու ապաստարաններում ապրող անձանց, ինչպես նաև բնական աղետների պատճառով տեղահանվածներին:

2010 թ. Մարդահամարի մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք 2010census.gov կայքէջը:

Հրատարակվել է 2009 թ. մայիսին | Ձև D-3286 (A)